«Էդիթ Պրինտ» հարատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ *Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում*

Հաստատություն՝Չարենցավան համայնքի «Զանգակ» մանկապարտեզ

ՀՈԱԿ

Դաստիարակ՝Գրիգորյան Վանուհի

Ղեկավար՝Ավետիսյան Ժաննա

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....2
ԳԼՈՒԽ 1 4
ԾԵՍԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ....4
ԳԼՈՒԽ 2 8
ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԾԵՍԵՐՆ ՈՒ ՏՈՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ԽՈՍՔԻ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ....8
ԾԻՍԱԿԱՆ ՏԻԿՆԻԿՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՏՐԻԲՈՒՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ....9
ԾԻՍԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ....9
ԱԶԳԱՅԻՆ ԾԻՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ....10
ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ....10
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԾԵՍԵՐ....11
ՆՈՐ ՏԱՐԻ....12
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ....12
ՎԱՐԴԱՎԱՌ 14
ԶԱՏԻԿ 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ....17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական կրթությունը համարվում է հանրակրթության առաջին աստիճանը: Երկար տարիների աշխատանքային գործունեության փորձը ցույց է տվել,

որ նախադպրոցական կրթություն չստացած երեխաները դժվարությամբ են հարմարվում դպրոցական ռեժիմին, չեն ներգրավում դպրոցական գործունեությանը։
Որքան էլ տեղեկատվական տեխնոլոգիաները զարգանում և մուտք են գործում կրթության ոլորտ, միևնույն է ուսման գործընթացը զարգանում է կրթության պետական չափորոշչի առաջարկվող կրթական նորմերով։
Ինչպես գիտենք չափորոշիչը սահմանում է ուսումնական բեռնվածության առավելագույն աստիճանը, կրթական ծրագրային նյութերը, սակայն մանկապարտեզում լայնորեն կիրառվում են դաստիարակության տարբեր ոլորտներ, որոնք երեխաների մեջ սեր են արթնացնում դեպի բնությունը,ազգային արժեքները։ Այդ արժեքները ժամանակի ընթացքում պետք է զարգացնել, որի նպատակը հայրենասիրության և ազգային ավանդույթների պահպանումն է։ Հայրենասիրական դաստիարակությունը բոլոր կրթական կառույցներում պետք է լինի առաջնային դիրքում, քանի որ հայենասոիրությունից է սկսվում ուսումը, դաստիարակությունը։
Ինչպես գիտենք հայրենասիրությունը խթանելու համար գրեթե բոլոր մանկապարտեզների տարեկան միջոցարումների ցանկում ընդգրկվում են հանդեսներ հայրենասիրական և ազգային ավանդույթների թեմատիկայով։ Նմանօրինակ միջոցառումներում մանրամասն նկարագրվում են ազգային ծեսերն ու ավանդույթներն դրանց խորհուրդն և դաստիարակչական նաշանակությունն։
Ազգային ծեսերին և ավանդույթներին վերաբերող միջոցառումներն ունեն հետևյալ դաստիարակչական նշանակությունը՝

- Հայրենասիրական դաստիարակություն
- Գաղափար ազգային ծեսերի վերաբերյալ
- Ազգային կոլորիտի ստեղծում։

Սույն աշխատության նպատակն է՝

- Ներկայացնել, թե ինչ է ծեսը՝ օգտվելով խաղային տարբերակներից, քանի որ մանկապարտեզում առաջատար գործոնը խաղն է։ Փորձը ցույց է տվել, որ խաղերի միջոցով երեխաները արագ են ըմբռնում նյութը,
- Բեմականացման միջոցով ցույց տալ ծիսական գործողությունը,
- Երեխաներին նախապես ծանոթացնել ծեսի նշանակությանը,

- Ամփոփիչ հատվածում անդրադառնալ նրա դաստիարակչական նշանակությանը:

Այսպիսով՝ ծեսերի իրագործման գլխավոր նպատկներից մեկն էլ այն է, որ ազգային մշակութային արժեքները չմոռացվեն: Երեխան հանդիսանում է ծեսը պահպանողը և փոխանցողը դեպի տուն, շրջակա աշխարհ: Փորձերը ցույց են տվել, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական ազատ և անկաշկանդ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգացնում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Հետզոտական աշխատանքը կարելի է օգտագործել նախադպրոցական միջին և ավագ խմբի սաների զարգացման համար:

ԳԼՈՒԽ 1

ԾԵՍԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախադպրոցական մանկավարժության դասընթացը ամենայն պատասխանատվությամբ է վերաբերվում նախադպրոցական տարիքում առաջատար՝ խաղային գործունեության նշանակությանը նախադպրոցականի կյանքում: Խաղի ծագման և էության մասին բազմաթիվ տեսությունների մանկավարժական վերլուծության հիման վրա հոգեբանորեն է մեկնաբանվել խաղի ժամանակակից տեսությունը: Երեխայի զարգացմանը նպաստում է զարգացնող միջավայրը, որը երեխայի զարգացմանը դրդող առարկայական տարածությունն է: Մանկապարտեզում երեխան ստանում է բազմակողմանի դաստիարակություն, միաժամանակ կրթվում է: Մանկապարտեզում ուսուցանվող յուրաքանչյուր առարկա ունի իր ազդեցությունը երեխայի զարգացման ոլորտում, օրինակ՝ ֆիզիկական ակտիվությունը ապահովում է երեխայի օրգանիզմի կենսագործունեությունը, ինտելեկտուալ ակտիվությունը՝ ինքնահաստատմանը նոր միջավայրում,իսկ հուզական ակտիվությունը հաղորդակցվելու հրաշալի միջոց է, համագործակցության առաջին դրսևորումը: Ի վեջո երեխան ձեռք է բերում սոցիալական ակտիվություն, որը դրսևորվում է գործունեության տարբեր ձևերով: Այդ գործունեության ձևերից են՝

- Աշխատանքային գործունեություն

Այն ուղղված է աշխատանքի արդյունքն ստանալուն: Երեխան հակված է սոցիալական ակտիվության, սակայն երբ այդ ակտիվությունը լիարժեք չի դրսևորվում՝ բացակայում են գործունեության դրսևորման համար անհրաժեշտ պայմանները:

Սա նշանակում է, որ աշխատանքային գործունեությունը կարող է դիտվել խաղի մի տեսակ, այսինքն երեխան կարող է խաղալ, միաժամանակ չգիտակցելով, որ ինքը որևէ աշխատանք է կատարել: Այս ամենից կարելի է ենթադրել, որ խաղային գործունեությունը հետագայում պայմաններ կարող է ստեղծել գեղարվեստական գործունեության համար՝ ծեփ, նկարչություն և այլն:

Երեխայի ճիշտ զարգացումը կապված է մի շարք առանձնահատկություններով, դրանք են՝

- Ֆիզիկական և հոգևոր զարգացում,
- Պայմանական ռեֆլեքսների զարգացում,
- Զգայարանների զարգացում,
- Խոսքի և հաղորդակցության զարգացում:

Մանկապարտեզում երեխաներին տրվում է բազմակողմանի դաստիարակություն։ Առանձնահատուկ պետք է անդրադարնալ հայրենասիրական դաստիարակությանը։ Այդ ամենին հասնելու համար մանկավարժները պետք է կիրառեն իրենց ամբողջ գործիքակազմը, այսինքն առաջին հերթին պետք է երեխաներին պատկերացում տալ ազգային տոների և ծեսերի վերաբերյալ։ Իսկ ինչ են դրանք և ինչպես ճիշտ կազմակերպել այդ ամենը։

Այժմ խոսենք այն մասին, թե ինչ են իրենցից ներկայացնում ծեսերն ու ավանդույթները։ Ազգային ծեսը մշակութային այն տարրն է, որը առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում։ Կյանքի դժվարությունները, ժամանակի փոփոխությունը որոշակի ծեսեր դուրս են մղել գործածությունից։ Ազգային ծեսերի վերեկանգնման խնդիրը բոլոր ժամանակներում եղել է արդիական։ Այն պետք է վերականգնել կրթության բոլոր բնագվառներում։ Պետք է նշել մի կարևոր հանգամաք, որ ծեսերը բեմականացումներ չեն, երեխաներն են ստեղծում վերաիմաստավորում այդ տոները։ Ազգային ծեսի վերականգնումը ունի մի շարք դրական կողմեր՝

- Երեխաները ծանոթանում եմ ազգային ծեսին,
- Սովորում են ծիսական երգեր, խաղեր, խաղերգեր,
- Վերականգնվում է ծիսական միջավայրը, արդյունքում վերականգնվում է տոնը իր ամբողջ շուքով։

Մանկապարտեզում որևէ ազգային ծես ներկայացնելիս առաջին հերթին պետք է կատարել նախապատրաստական աշխատանքներ՝ սովորել ծիսական երգեր, պարերգեր, ստեղծել միջավայր, անհրաժեշտության դեպքում տիկնիկներ և այլ ատրիբուտներ։ Ծեսերի տարածմանը կարող են նպաստել համագործակցությունը մակապարտեզների միջև։ Այսպիսով հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ՝ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն։ Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և որպես պահպանող և որպես քննադատող։

Երեխան դաստիարակվում և սովորում է յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը։ Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում ուսումնական հաստատությունը։ Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք։ Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, դրանց խորհուրդն ու

նշանակությունը: Այս ամենի նպատակն այն է, որ ծեսը դառնա երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Երեխան քայլ առ քայլ, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ կարողություններ և հմտություններ ձեռք բերելով յուրացնում է ծեսը:

Այժմ հստակ նշենք այն բոլոր կետերը, որոնք անհրաժեշտ են ազգային տոներն ու ծեսերը կազմակերպելու համար, դրա համար պետք է կիրառել մի քանի մեթոդ՝

- ✓ Մեդելավորում
- ✓ Վարժություններ
- ✓ Փորձեր

Այժմ անդրադառնանք դրանց:

Ազգային ծիսական որևէ մոդել ներդնելիս պետք է հաշվի առնել նաև խաղային գործունեությունը:

Մենք հայերս ունենալով բազմադարյան պատմություն, ունեցել ենք բազմաթիվ ազգային տոներ: Մոդելավորումը նոր մեթոդներից է, որի հիմքում ընկած է ուսուցման նյութի ներկայացումը մոդելի ձևով: Մոդելը ուսուցանվող նյութի պատկերն է: Եթե օրինակ պետք է ներկայացնել Նավասարդը, ապա այս դեպքում պետք է ցույց տալ Նավասարդը ներկայացնող, բնութագրող նկարներ: Նախադպրոցական ուսումնական գործընթացում օգտագործվում են մոդելների տարբեր ձևեր՝ առարկայական մոդելներ, սխեմատիկ մոդելներ և վերացական մոդելներ, սխեմաներ, դիագրամաներ:

Վարժությունները ուրույն տեղ են զբաղեցնում մտավոր դաստիարակության համակարգում: Վարժությունները հետաքրքրում են երեխաներին նրանով, որ դրանք կարծես խաղային գործունեություն լինեն:

Ծեսի, ազգային տոնի իրականացման մեջ ակտիվորեն կիրառվում են խաղեր, ուսուցման ընթացքում օգտագործվում են խաղային գործունեություն տեսակներ, որոնք զարգացնում են մտավոր ոլորտը, տրամաբանությունը:

Փորձերի դերը անգնահատելի է ժամանակակից դիդակտիկայում, փորձարարությունը երեխայր գործունեության յուրահատուկ ձևն է, որը զարգացնում է նրա մտավոր կարողությունները:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ ծեսերի ուսուցման մեթոդիկան երեխաներից պահանջում է նաև ակտիվ ֆիզիկական գործողություններ: Օրինակ եթե բակում

կազմակերպվում են ավանդական խաղեր, ապա երեխաները պետք է լինեն ակտիվ, որպեսզի կարողանան հասնել վերջնական արդյունքի: Ֆիզիկական ակտիվությունը ամրապնդում է երեխայի առողջությունը, կոփում է օրգանիզմը, ժամանակին ձևավորում է երեխայի շարժողական կարողությունները ու հմտությունները: Կարևորելով երեխայի ֆիզիկիական ակտիվությունը՝ դրա բացակայությունը ավելի վտանգավոր է,քան ծանրաբեռնվածությունը: Ֆիզկուլտուրայի պարապմունքները պետք է նպաստեն երեխայի ոսկրամկանային համակարգի զարգացմանը: Երեխայի խոշոր մոտորիկայի զարգացման համար անհրաժեշտ է ֆիզիկական վարժություններ և շարժախաղեր: Այս ամենը հիմք է տալիս մտածելու, որ ազգային ծեսերի ուսուցումը պահանջում է երեխայի ամբողջական ներգրավածություն, ընդգրկում է նախադպրոցական բնագավառի բոլոր ոլորտները՝ մտավոր դաստիարակություն, գեղագիտական դաստիարակություն խաղային գործունեություն և այլն: «Ազգայինը միշտ նորաձև է» հայտնի արտահայտությունը բոլոր ժամանակներում արդիական է: Մշակութային և ավանդական արժեքները, որոնք ունեն ազգային դիմագիծ և տարրեր, ընդունելի են եղել բոլոր ժամանակներում: Նույնիսկ Հայաստանի սահմաններից դուրս բացվել են հայկական տաղավարներ, որտեղ ցուցադրվել են հայկական խոհանոցի ուտեստներ, ավադդական գորգեր, գոգնոցներ, գլխաշորեր և այլն:

ԳԼՈՒԽ 2

ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԾԵՍԵՐՆ ՈՒ ՏՈՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ԽՈՍՔԻ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսի իրագործման ընթաքցքում տեղի է ունենում, բնական հաղորդակցական միջավայրում: Ծեսի կազմակերան ընթացքում երեխան խոսում և շփվում է հասակակիցների, մեծահասակների հետ: Սխալ կլինի մտածել, որ երեխայի խոսքը զարգանում է մայն խոսքի զարգացման հատուկ պարապմունքների ժամանակ: Նախադպպրոցական կրթության մեջ ծեսերի առանձնահատկություններից մեկն էլ այն է, երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտներն մասնակցում են այդ գործընթացին: Երեխաները այդ ընթացքում շփվում և հաղորդակցվում են միմյանց հետ, նրանք նախագծում են իրենց

անելիքը, այն քննարկում են ընկերների հետ, պատմում իրենց տեսածի և արածի մասին։ Ծեսի կազմակերպման ընթացքում դաստիարակը երեխաներին պատմում և տեղեկություն է հաղորդում այդ ամենի վերաբերյալ, որպեսզի երեխան իմանա իր անելիքը, ծեսի խորհուրդը։ Երեխան իր գործունեության բոլոր տեսակներին զուգահեռ պատմում, կարծիք է հայտնում, պատասխանում է դաստիարակի տված հարցերին։ Այս ամենը բնականաբար նպաստում է երեխայի ակտիվ խոսքի զարգացմանը այնքանով, որքանով խոսքի զարգացման պարապմունքը։ Երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով,քան միայն լսելով։ Սա նշանակու է, որ ծեսի կազմակերպման գործընթացը ամբողջությամբ խաղ է։ Այժմ ներկայացնենք, թե ինչպես է ծեսը ազդում խոսքային մյուս ոլորտների վրա՝ հուզական, մտավոր, սոցիալական և այլն։

ԾԻՍԱԿԱՆ ՏԻԿՆԻԿՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՏՐԻԲՈՒՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Երեխան պետք է ներգրավի ծեսի նախապատրաստական աշխատանքներին, դրանք հիմնականում ծիսական պարագաների նախապատրաստումն է։ Այդ գործողության ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու։ Այդ ընթացքում նրանք շփվում են միմյանց հետ, քննարկում են ինչն է իրենց դուր գալիս և այլն։ Նրանք դաստիարակի օգնությամբ պատմում են ծիսական տիկնիկների նշանակության մասին։ Այս ամենի շուրջ նրանք կարող են հորինել և ավելացնել նոր դրվագներ։ Այս ամենը մեծ ազդեցություն է թողնում վերոնշյալ խոսքային զարգացմանը նպաստող ոլորտների վրա։ Տիկնիկագործության համար երեխաները կարող են օգտագործել թել ու ասեղ, ազգային տարազի կտորներ, բամբակ, բուրդ և այլն։

ԾԻՍԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ծիսական և մանկական խաղերը ազդում են երեխայի խոսքին նպստող բոլոր ոլորտների վրա։ Այս դեպքում երեխան ձեռք է բերում հերթով գործողություն

կատարելու կարողություն: Այս գործողության կարևորագույն մասն այն է, որ երեխան այդ աշխատանքից հաճույք է ստանում:

Ծիսական խաղերը դրական են ազդում նաև երեխայի զգացմունքային զարգացման վրա: Խաղի ժամանակ նրանց մոտ առաջանում է հույս, վախ, մրցակցություն:

Ծիսական խաղը մեծ ազդեցություն է թողնում նաև մտավոր զարգացման վրա: Օրինակ ձվախաղերն ու ընկուզախաղերը զարգացնում են երեխաների իմացական հմտությունները: Ծիսական խաղը նպաստում է նոր լեզվական հմտությունների զարգացմանը:

Ծեսի իրագործումը ինքնին կարելի է խաղ համարել: Երբ երեխան կատարում է որևէ աշխատանք, նա կրկնօրինակում է իր մայրիկին, հայրիկին, տատիկին: Այս ամենը կատարում է մեծ ոգևորությամբ:

ԱԶԳԱՅԻՆ ԾԻՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Երխաների դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունի երաժշտությունը: Երաժշտության միջոցով երեխաներին կարելի է հանգստացնել, սփոփել, կրթել: Ազգային ծիսական երաշտությունը երեխաների մոտ ձևավորում է բարձր ճաշակ և ծանաոթացնում մշակութային տարրերին: Առհասարակ երաժշտությունը երեխային կարող է զարգացնել բազմակողմանի՝ ձևավորելով նրա ճաշակն ու նախասիրությունները: Այն կարող է ազդել երեխայի զգացմունքների, սոցիալական զարգացման, լեզվական հաղորդակցության վրա:

Որոշ ծեսեր կարող են կապ ունենալ բնության հետ: Այդ դեպքում այն պետք է կազմակերպել բացօթյա միջավայրում: Այն կապ է ստեղծվում բնության և երեխայի միջև՝ բնության հետ ստեղծելով ներդաշնակ կապ: Բացօթյա միջավայրը հզոր միջոց է գեղեցիկը ընկալելու և գնահատելու համար: Բացօթյա միջավայրում կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում ունի մեծ հետաքրքրություն յուրաքնչյուր երեխայի համար, այն հետաքրքիր է և շատ գեղեցիկ:

ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Ծեսի կազմակերպման ընթացքում երեխաները հաղորդակցվում են անկաշկանդ, փոխանակում են մտքեր ու կարծիքներ, պատմում են շրջապատից ստացած կարծիքների մասին: Ծիսական խաղերը դրական ազդեցություն են թողնում երեխաների զարգացման վրա, նրանց մոտ զարգացնելով համագործակցությունը, թիմային աշխատանքը, իսկ բացօթյա պարապմունքները ամրապնդում են երեխաների կապը բնության հետ: Դաստիարակը պետք է ամեն ինչ անի ծիսական միջոցառումը գեղեցիկ կազմակերպելու համար: Նախօրոք երեխաների հետ պետք է պատրաստի անհրաժեշտ պարագաները, ստեղծի ծեսին բնորոշ միջավայր: Ծեսի նախապատրաստական աշխատանքները բավականին հետաքրքիր են երեխաների համար, որովհետև նրանք անմիջական մասնակից են այդ ամենին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկապարտեզում ամեն ինչ արվում է երեխաների բազմակողմանի զարգացման համար, ապա պետք է նշել, որ այս գործընթացը ծառայում իր բուն նպատակին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԾԵՍԵՐ

Այժմ ներկայացնենք, թե ինչն է ծեսը, որտեղից է այն առաջացել, հայկական ավանդական ինչ ծեսերի ենք ծանոթ:

Հնում ծես բառը կապված է եղել կրոնական արարողությունների հետ: Բոլոր հավատացյալները ծեսերին վերագրել են մոգական, խորհրդավոր, հատկություններ: Ծիսակատարությունը, որի մեջ մեծ դեր է խաղացել հոգևորականությունը, ընթացել է աղոթատանը, եկեղեցիներում, տաճարներում, որոնց համար սահմանվել են օրեր և ժամեր: Այն ուղեկցվել է աղոթքներով, խմբերգերով, երաժշտությամբ, հավատացյալների մասնակցությամբ: Ծեսը հավատացյալների վրա ազդելու միջոց է եղել: Ծեսերը արատահայտել են որոշակի հասարակական հարաբերություններ, ուստի դրանք ժամանակի հետ փոխվել են՝ հարամարեցվելով որոշակի պահանջմունքների: Հին Հայաստանում ծեսերի գիրքը անվանել են Ծիսարան կամ Մաշտոց: Հետագայում այս անվանումը փոխվել է, Մաշտոց անվանել են օրհնությունների գրքին: Մարդիկ ծեսերի հետ ունեցել են հոգևոր կապվածություն, կապել են որշակի հույսեր, հավատալիքներ:

ՆՈՐ ՏԱՐԻ

Հին Հայաստանում Ամանորը շնորհավորելու հետաքրքիր սովորույթ է եղել. բարեկամներն իրար տուն այցելելիս միմյանց նվիրել են հատիկեղենով ճաշեր և քաղցրավենիք, կանայք սրբազան ծառի ճյուղերին կարմիր կտոր են կապել, որպեսզի եկող տարին ուրախ ու պտղաբեր լինի, կարմիր ուրախ օրեր շատ լինեն։ Հայկական ամանորին տոնածառը զարդարում էին ծառի չոր ճյուղերին կապելով գունավոր կտորներ, թելեր, չոր մրգեր, չրեր։ Ամանորը եղել է մեծերի և փոքրերի սիրելի տոներից։

Մեր պապերը ամանորին ուտում էին միայն բուսական ծագմում ունեցող ուտելիքներ։ Քանի որ Ամանորը Սուրբ Զատիկից առաջ էր լինում, հետևաբար պետք է ուտեին միայն բուսական ծագմամբ ուտելիքներ, այն համարվում էր նաև ծոմապահություն։ Շատ տարածված է եղել հատիկեղենից պատրաստված կոլոլակները, ինչպես նաև պասուց ճաշատեսակները։ Նախկինում ամանորը բեռ չէր տանտիրոջ համար, քանի որ ճաշատեսակները պատրաստելիս մարդիկի օգտագործում էին ամբողջ տարվա ընթացքում կուտակածը։ Ամանորին մարդիկ միմյանց նվիրում էին կարմիր խնձոր, իսկ մեր օրերում ավանդույթը փոխվել է՝ մարդիկ միմյանց նվիրում են այլ նվերներ։ Մեր օրերում ամանորը այլ արժեք ունի մարդկանց համար, ցավոք նայն կորցրել է իր ծիսական գեղեղկությունը։

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Սուրբ Ծնունդը հայ ժողովրդի սիրելի տոներից մեկն է, որը նշվում է մեծ շուքով։ Ժողովուրդը հնում ծեսն անվանել է նաև Զրօրհնեք։ Այս տոնին նախորդում է մեծ պահքը։ Հունվարի հինգի երեկոյան՝ ճրագալույցի պատարագի ավարտին, մոմերի լույսի ներքո, խնկաբույր տանը ընթրում էին, ուրախանում։ Ճրագալույցից հետո մարդիկ դուրս էին գալիս, երգում էին և փառաբանում միմյանց։ Քրիստոսի ծնունդը ավետող երեխաների խումբը այդպիսի երգերով թակում էին դռները, իսկ մեծերը

բացելով այն նրանց կոնֆետներ էին տալիս։ Սուրբ ծնունդը նույնպես սիրված է եղել հայ ժողովրդի կողմից, այն նշվել է մեծ շուքով։

Մանկապարտեզի տարեկան միջոցառումների ցանկում անպայման նշվում է Սուրբ Ծննդյանը նվիրված հանդեսները։ Երեխաներրը մեծ ոգևորությամբ են մասնակցում այդ ամենին, մարմնավորում են օրվա խորհուրդը բնութագրող կերպարներ։

Սուրբ Ծննդյան շուրջ հորինվել են բազմաթիվ պատմություններ և ավանդույթներ։ Ըստ ավանդույթի Սուրբ Ծնունդին մարդիկ իրենց զարդարում են կանաչ և ոսկեգույն դեկորներով, որը խորհրդանշում է Քրիստոսի ծնունդը։

Հայ ժողովուրդը լինելով առաջին քրիստոնյա ազգը՝ մեծ շուքով է նշում Սուրբ Ծննդյան արարողությունը։ Այս տոնը բոլոր ժամանակներում իսկապես մեծ շուքով է նշվել Հայաստանում։ Մարդիկ ապագայի հանդեպ հույսով ու հավատով են լցվում, մեծ սիրով մասնակցում են նաև ճրագալույցի պատարագին։ Այդ օրը բոլորը այցելում են եկեղեցի և Քրիստոսի լույսը բերում են իրենց տուն։

Սա ևս մի հավատալիք է, որը եկել է վաղնջական ժամանակներից և պահպանվել է մինչև մեր օրեր։

ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառը կամ Քրիստոսի պայծառափայլության տոնը նշնում է Զատիկից իննսնութ օր անց, հունիսի քսանութից մինչև օգոստոսի մեկը ընկած ժամանակահատվածը: Վարդավառը հայ առաքելական եկեղեցոը հինգ տաղավար տոներից մեկն է:

Վարդավաեը հայ ավանդական տոներից ամենասիրելին է: Քաղաքներում Վարդավառը ավելի շատ համարվուն է մանկական տոն, երեխաներն այն անվանում են «Ջրոցի»,այսինքն ուրախ ջրել անցորդներին:

Վարդավառի տոնին նախորդում է շաբաթապահքը, իսկ հաջորդ օրն մեռելեց է, հայ առաքելական եկեղեցում ննջեցյալների հոգու հանգստության համար մատուցվում է հոգեհանգստի պատարագ:

Վարդավառը հեթանոսական տոն է, որը նվիրված է եղել Աստղիկ և Անահիտ աստվածուհիների պաշտամունքին, իսկ քրիստոնեական ավանդույթի համաձայն, այդ օրը Հիսուս Քրիստոսը առաքյալների հետ միասին բարձրացել է Թաբոր լեռը աղոթելու: Հոգնածությունից առաքյալները քնում են, իսկ Քրիստոսի վրա լույս է իջնում, այդ լույսից առաքյալները արթնանում են և ականատեսը դառնում Քրիստոսի պայծառակերպությանը: Դրա համար էլ տոնը այլ կերպ անվանում են Քրիստոսի պայծառակերպության տոն»:

Վարդավառի խորհուրդը եղել է ջրի պաշտամունքը: Վաղ ժամանակներում տոնը նշել են ջրի ակունքների մոտ, որպեսզի ավելի հարմար լինի: Վարդավառը եղել է նաև ուխտագնացության տոն, օրինակ Զանգեզուրում այն կազմակերպել են ուխտագնացություն կատարելով դեպի Խուստուփ լեռ, Մեծ Իշխանասար, Դիզափայտ և այլ վայրեր: Վարդավառի տոնին հավաքվում էին լարախաղացներ, կազմակեպվում էին ուրախ խաղեր տոնավաճառներ, պարեր:

Երկար կարելի է խոսել հայկական ավանդական տոներից, ծեսերից և հավատալիքներից: Այդ ամենը եղել է հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի մի փոքրիկ մասը միայն, որը պահպանվելով հասել է մինչև մեր օրեր:

Վարդավառրի տոնը նշում են նաև նախադպրոցական ուսումնական հաստատություններում, այդ օրը երեխաների համար իսկական տոն է: Նախօրոք երեխաներին բացատրվում է տոնի նշանակությունը, որից հետո սկսվում է միմյանց վրա ջուր ցողելու ավանդույթը: Այն մանկապարտեզում վերածվում է իսկական խաղ զվարճալիքի, որին երեխաները մասնակցեում են սիրով:

Հայ ժողովրդի հավատալիքներն ու սպասելիքներն միշտ կապակցված են եղել միմ յանց հետ: Ահա այդպիսի մի տոն է նաև Վարդավառը, որին ժողովուրդը սպասել է մեծ սիրով ու անհամբերությամբ:

ԶԱՏԻԿ

Զատիկը համապատասխանում է Սուրբ Հարության տոնին և նշվում է մարտի քսանմեկից մինչև ապրիլի քսանհինգը ընկնող կիրակին: Ըստ եկեղեցական օրացույցի այդ օրը նշվում է Քրիստոսի հարությունը: Զատիկի առավոտը բոլորի համար սկսվում է ներկված ձվերով, տապակած բանջարեղենով, բուսական սննդամթերքով: Ներկված և զարդարած ձվերը հարսնացուները ուղարկում էին փեսացուներին, ազգականներին: Տոնի ընթացքում ամենասիրված խաղը ձվակռիվն է, որը տոնին հաղորդում է զվարճալի տրամադրություն:

Ինչպես բոլոր ավանդական տոները, այնպես էլ Զատիկը մանկապարտեզում նշվում է մեծ ոգևորությամբ: Երեխաներին այդ օրը մանկապարտեզում հյուրասիրում են ներկած ձվեր, այն ուղեկցվում է ուրախ ձվախաղով:

Տոների ուսուցանումը ունի կարևոր նշանակություն: Այն երեխաներին մոտեցնում է ազգային ակունքներին և դաստիարակում է հայրենասիրություն: Ազգային տոների ուսուցումը պետք է դրված լինի կարևոր հարթության վրա քանզի ազգային դաստիարակությունից է սկսում մարդ ձևավորվելու հատկանիշները:

Սուրբ Զատիկին նվիրված բազմաթիվ միջոցարումներ են կազմակերպվում մանկապարտեզում՝ հանդեսներ, թեմատիկ միջոցառումներ, բաց պարապմունքներ, որոնք ավելի են ամրապնդում երեխաների գիտելիքները:Այս ամենը թույլ է տալիս մտածելու, որ մանկապարտեզում երեխաները ստանում են բազմակողմանի գիտելիքներ: Երեխաները կարեղ են հանդես գալ մշակութային միջոցառումներով, որտեղ հանգամանալից կարող են անդրադառնալ հայկական ավանդական ծեսերին և հավատալիքներին: Սա կարող է ընդգրկել մի ամբողջական փաթեթ, որի մեջ կարելի է ներառել ծիսական տոները ամբողջությամբ, որը ավելի հետաքրքիր կարող է լինել երեխաների համար:Սովորաբար միջոցառման ծրագիրը կազմելիս հաշվի են առնվում մի շարք հանգամանքներ՝ թեմաներ, որոնք կհետաքրքրեն երեխաներին, թեմաներ, որոնք ունեն հարուստ բովադդակություն, թեմաներ, որոնք ունեն ուսուցողական նշանակություն: Այս առումով ծեսերը հրաշալի թեմա կարող են լինել, դրանցում կա վերոնշյալ բոլոր հատկանիշները: Անվերջ կարելի է խոսել ավանդական տոների, ծեսերի մասին, որոնց դերը անփոխարինելի է եղել բոլոր ժամանակներում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքը գրելիս բնականաբար օգտվել եմ բազմաթիվ նյութերից, որի արդյունքում հանգել եմ մի մշարք եզրակացությունների՝

- Որպես երեխայի առաջնային կրթություն՝ անփոխարինելի է նախադպրոցական կրթության դերը
- Երեխայի խոսքի և հաղորդակցության համար մեծ նշանակություն ունի այն միջավայրը, որտեղ կրթվում է երեխան: Այս առումով անփոխարինելի է այն զարգացնող միջավայրը, որը ստեղծում է դաստիարակը երեխային կրթելու համար: Այս պարագայում երեխան ձեռք է բերում բազմակողմանի գիտելիքներ:
- Ստեղծվում է այնպիսի միջավայր, որտեղ երեխան սովորում է խոսել, կարծիք արտահայտել, ձևավորվել որպես անհատ:
- Երեխայի խոսքային գործընթացը կառուցվում է մոթոդական սկզբունքների հիման վրա:
- Հատկապես ավագ խմբի երեխայի հոգևոր զարգացման վրա մեծ ազդեցություն են թողնում ծեսերն և ավանդույթները:
- Ծեսի կազմակերպման ընթացքում երեխան շփվում է հաղորդակցվում իր հասակակիցների հետ, կարծիք է հայտնում,նկարագրում, մեկնաբանում,հարց տալիս և պատասխանում է հարցերին:
- Զարգանում է երեխայի ուշադրությունը, հույզերը, երևակայությունը:
- Ազգային մշակութային տարրերը բազմակողմանի կարող են զարգացնել երեխային: Այս ամենի շնորհիվ նա կարող է ինքնադրսևորվել, հանդես գալ նախաձեռնությամբ, պատասխանել հարցերի:
- Ծեսը լինելով հոգևոր դաստիարակության միջոց զարգացնում է երեխայի լեզվական, հուզական, ֆիզիկական, մտավոր զարգացման ոլորտները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր(4-5 տարեկանների)
- Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր(5-6 տարեկանների)
- https://hy.wikipedia.org/wiki/%D4%B6%D5%A1%D5%BF%D5%AB%D5%AF
- https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BC

Ուսումնամեթոդական ձեռմարկներ՝

- Լալա Սարգսյան «Խոսքի զարգացման պարապմունքները» մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբում
- Հ.Միտոյան, Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան «Խոսքի զարգացման պարապմունքները» մանկապարտեզի միջին խմբում
- Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում